
**ԱՆՎԱՎԵՐ ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԱՄՈՒՄՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

ԺԱՄԿՈՉՅԱՆ Ա. Ս.

Քրիստոնեությունը ընդունած երկրներում, ինչպես նաև Հայաստանում ամուսնությունը բարձրացվել էր սրբազան խորհրդի մակարդակի: Հետևաբար Աստվածաշունչը խստագույնս արգելում էր ամուսնալուծությունը: Մակայն հասարակական զարգացումների և այլ պատճառների ազդեցությամբ հասարակությունը կարիք զգաց ձևավորելու և կանոնակարգելու ամուսնալուծությունը կարգավորող իրավանորմերը:

Ամուսինների կենդանության օրոք ամուսնական դաշնադրության դադարումն օրենքով թույլատրված հիմքերով կոչվում էր լուծումն ամուսնության, արձակում, բաժանում կամ պարզապես ամուսնալուծություն¹: Ամուսնությունը, ըստ Աստվածաշնչի, ցկեանս կապված մի դաշն է, որը խորհրդանշվում է ժողովրդական «մի բարձի ծերանաք» ասացվածքով: Մակայն մենք նաև գիտենք, որ, ըստ հայ իրավունքի, ամուսնությունը լուծելի է: Եկեղեցու խորհրդով կնքված ամուսնությունն անլուծելի է քաղաքային, մարդկային որևէ իշխանության կողմից. «Ձոր Աստված զուգեաց մարդ մի՛ մեկնեսցէ»: Հայ իրավունքի զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ նրա լուծելիության համար սահմանվել են իրավանորմեր, թեպետ եկեղեցին, մեկնելով ավետարանների մեջ ամուսնության մասին հիշատակությունները, ընդունում է, որ պսակը կարող է լուծվել միայն սոսկ շնության պարագային:

ա. Բոլոր ազգերի մեջ էլ ամուսնության բնական լուծողը² մահն է³: Որպեսզի մի ամուսնական կապ ամուսիններից մեկի մահվան պատճառով լուծված համարվի, պետք է այդ մահը ապացուցվի, այսինքն՝ իրոք տեղի ունեցած լինի:

բ. Մի ամուսնություն անվավեր է, եթե ամուսնացող զույգերի պսակը կատարվել է արյունակցական օրենքով անթույլատրելի աստիճանում: Այսինքն՝ հոգևոր ծայրագույն իշխանությունը կարող է զիջողաբար ներել և եղած պսակը վավերական ճանաչելն արտոնել:

գ. Ըստ հայ հին իրավունքի՝ ամուսնանալու համար կարևոր պայման է պսակվող կողմերի փոխադարձ համաձայնությունը⁴: Մ. Գոշի Դատաս-

¹ **Հովհաննիսյան Ս.**, *Ամուսնաբնտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում*, Ե., 1967, էջ 267:

² **Ղլտճյան Ա.**, *Հայոց հին իրավունքը*, Ալեքսանդրապոլ, 1913, էջ 218:

³ **Սամուելյան Խ.**, *Հայ սովորութական իրավունքը*, Թիֆլիս, 1991, էջ 217:

⁴ **Ղլտճյան Ա.**, *նշվ. աշխ.*, էջ 219:

տանագրքի առաջին մասի 91-րդ հոդվածը, կրկնելով Ս. Պարթևի 27-րդ և Դվինի Բ ժողովի 23-րդ կանոնները, պահանջում է տղային և աղջկան «ոչ պսակել զմիմիանս տեսնելոյ», քանի որ նրանք գուցե միմյանց չեն հավանում և չեն ցանկանում իրար հետ ամուսնանալ⁵։ Սակայն եթե պարզվի, որ մի պսակ կատարվել է կողմերից մեկի անհամաձայնությամբ, բռնի կերպով, ապա այդ պսակն անվավեր է։ Եթե պսակի ժամանակ կողմերից մեկն ասի, որ ինքը կամովին չի պսակվում, այլ հարկադրանքով, պսակը տեղի ունենալ չի կարող. պսակող քահանան այլ կերպ վարվելու դեպքում կենթարկվի պատասխանատվության։

- դ. Անվավեր են անչափահասների, անպատասխանատու անձանց, ինչպիսիք են հոգեկան հիվանդները, ամուսնանալու անընդունակների ամուսնությունները։
- ե. Եթե մեկը գոյություն ունեցած ու օրենքով ճանաչված մի ամուսնություն առանց լուծելու վերստին ամուսնանա, ապա այս ամուսնությունը կճանաչվի անվավեր, ու իր օրինավոր ամուսնու կենդանի ժամանակ կրկին ամուսնացող մեկը երկկնության համար պատասխանատվության կենթարկվի։
- զ. Ըստ հին սովորության, եթե պսակի գիշերը հարսնացուն առագաստում կույս դուրս չեկավ, մյուս կողմը հետ է ուղարկում աղջկան իր հոր տուն և կատարված պսակը անվավեր ճանաչում։ Ըստ հին հայ իրավունքի՝ այդպիսի պսակը անվավեր էր։ Եկեղեցական իրավունքը այդ առթիվ լռում է. եկեղեցու վարչությունը տեղի է տալիս սովորության իրավունքին, իսկ սովորությունն այդպիսի ամուսնությունը լուծում և անվավեր է հաշվում։
- է. Ամուսնությունը լուծելի է նաև գերեվարության⁶ և անհետ կորչելու պատճառով⁷։ Դվինի ժողովի 7-րդ կանոնով, եթե ամուսիններից մեկը գերի է տարվել, մյուս ամուսինն իրավունք ունի պսակվելու, միայն ոչ շուտ, քան գերի տարվելու օրից յոթ տարի անց։ Եթե ամուսիններից մեկն ամուսնանա նախքան օրինասահման ժամանակը, ապա այդ ամուսնությունը կճանաչվի անվավեր, պսակվողն ու պսակողը կենթարկվեն պատասխանատվության։
- ը. Շահապիվանի ժողովի 7-րդ կանոնը հետևյալ հիմնակետերն է սահմանում առևանգման միջոցով գլուխ եկած ամուսնությունն անվավեր լինելու մասին՝ ա. առևանգմամբ ամուսնությունը անվավեր է, բ. առևանգումից հետո թույլատրելի է պսակվել, եթե պսակվող կողմերն ու նրանց ծնողներն համաձայն են, գ. եթե առևանգումից հետո պսակ է տեղի ունեցել առանց ծնող

⁵ Սուքիասյան Ա., Մխիթար Գոշը և «Հայոց դատաստանագիրքը», Ե., 1965, էջ 132.

⁶ Ղլտճյան Ա., նշվ. աշխ., էջ 220:

⁷ Սամուելյան Խ., նշվ. աշխ., էջ 218:

ների համաձայնության, ապա այդ պսակն անվավեր է: Սովորույթի իրավունքով, երբ առանգումից հետո պսակը իրապես կատարվել է կողմերի՝ աղջկա և տղայի փոխադարձ համաձայնությամբ, նա անվավեր չի ճանաչվում, այսինքն՝ երրորդ անձերի բողոքի իրավունքը չի վերածվում արժեքի: Իսկ եթե պսակը կատարվել է ոչ միայն ծնողների կամ խնամակալների կամքին հակառակ, այլ նաև փախցրած աղջկա կամքին դեմ, ապա այդ պսակը պետք է անվավեր ճանաչել: Հայ եկեղեցու մեջ գոյություն ունեցող սովորությունը այդպիսի դեպքերում հոգևոր իշխանության պարտքն է բողոքները քննել և կողմերին հաշտեցնել:

Ամուսնալուծությունը կարող է տեղի ունենալ կողմերից մեկի ինքնակամ վճռի համաձայն և կամ ամուսնական կապը քանդելու նկատմամբ կողմերի համաձայնությամբ: Մի դեպքում ամուսիններից մեկը (սովորաբար տղամարդը) ինքնակամ դուրս է անում իր մյուս ամուսնուն, իսկ մյուս դեպքում տեղի է ունենում ամուսնալուծություն՝ օրենքով նախատեսված հիմունքներով:

Շահապիվանի ժողովի 4-րդ և 5-րդ կանոնների համաձայն՝ իր անմեղ կնոջը արձակող ամուսինը ենթարկվում է տուգանքի: Նա, ըստ տվյալ իրավիճակի, նայելով դեպքին, կորցնում է իր կարողության մինչև կեսը՝ հոգուտ իր անպարտ կնոջ:

Ամլության պատճառով սովորաբար Հայաստանյայց եկեղեցին ամուսնալուծում չի կատարում: Մխիթար Գոշի Դատաստանագրքում, սուրբ հայրերի կանոնադրությանց և հայրապետների կանոնական կոնդակներում մասնավոր հրահանգներ կան այդ մասին: Սակայն Շահապիվանի ժողովը (կանոն 5) ամլությունը բացահայտորեն ընդունում է իբրև ապահարգանի պատճառ, պայմանով, որ կինը իր օժիտը հետ առնի, և ամուսինն էլ վճարի մասնավոր տուգանք: Ամուլ կնոջ արձակումը կատարվում է ոչ թե ամուսնու կամքով, այլ եկեղեցական իշխանության քննությամբ և վճռահատությամբ⁸. «Եթե որևէ կին ամուլ լինի և նրա ամուսինը ամլության պատճառով արձակի, կինը ինչ-որ կահ-կարասիք բերել է, թե՛ աղախին, թե՛ անասուն, թե՛ հանդերձ, թե՛ արծաթ, իրավունք ունի առնել և գնալ: Եվ եթե բացի ամլությունից այլ արատ չունի, ամուսինը պարտավոր է կնոջը վճարել նաև տուգանք՝ նրան հասցրած անարգանքի համար, թե ազատ է 1200 և թե շինական 600 դրամ»:

Ըստ Մխիթար Գոշի, եթե ամլությունը ժառանգական է, ամուսինը կարող է իր կնոջը ուրիշի հետ ամուսնացնել: Եթե պսակի ժամանակ աղջիկը 15 տարեկան է, իսկ տղամարդը՝ 18, ամուսնալուծության համար պետք է սպասեն յոթ տարի, իսկ եթե ավելի փոքր են, ապա պետք է սպասեն ավելի շատ: Եթե կինը չէր ցանկանում ուրիշի հետ ամուսնանալ, ամուսինը պարտավոր էր հոգալ նրա ապրուստը, քանի նա կենդանի է, ինչպես նաև վերադարձնի օժիտը: Իսկ եթե ամուսինը նախօրոք գի-

⁸ Գոշ Մ., Դատաստանագիրք, Ե., 1975, էջ 122:

տեր կնոջ ամլության մասին, ապա չէր կարող նրանից բաժանվել⁹. «Եթե կանխաւ գիտասցէ զամլութիւնն եւ տոպանօք առնուցու ցանկութեամբ, մի լիցի մինչ ի մահ մեկնիլ»¹⁰:

Հին հայի համար ժառանգ թողնելու միտքը ամուսնության մեջ առաջնակարգ տեղ ունի. ավելին, ժառանգներ, հասկապես արու զավակներ ունենալը ամուսնական կապի գլխավոր նպատակն է: Ամլությունը կարող է առաջ գալ զանազան պատճառներից, այդ արատը կարող է հետևանք լինել մարմնական որևէ պակասության կամ հիվանդության և կամ թե դիտավորյալ: Դիտավորյալ ամլությունն էլ կարող է առաջ գալ կամ ամուսնական պարտավորությունները չկատարելուց, կամ արհեստական միջոցով սաղմը ոչնչացնելուց և կամ հղիանալու ակտն անհնար դարձնելուց: Ըստ հայ հին իրավաբանության՝ ամլությունը արատ է, ու այդ արատի համար ամուսնությունը լուծելի: Այսինքն՝ ամուսիններից մեկի ամլությունը հիմք է մյուս կողմի համար ամուսնալուծություն պահանջելու¹¹: Ամլության դեպքում, երբ ձեռնարկած բժշկական միջոցներն այլևս անգոր են, առնվազն յոթը տարի սպասելուց հետո կարող են բաժանվել: Կինը կարող է նորից ամուսնանալ, հակառակ դեպքում պետք է ապրի որպես այրի: Նույնը վերաբերում է նաև ամուսնուն: Ամուսնալուծության խնդիրը որոշելու համար խիստ կարևոր է իմանալ, որ թե՛ հայկական իրավունքը և թե՛ սովորության իրավունքը ճանաչում են հետևյալ իրավանքները.

- 1) ե՞րբ է ծագել ամլությունը՝ երևան է եկել հետո՞, ամուսնական կյանքի ընթացքում, թե՞ նախքան ամուսնությունը.
- 2) կողմերից մեկի ամլությունը հայտնի էր մյուս կողմին ամուսնության դաշնը կնելուց առաջ, թե՞ հետո.
- 3) ամլությունը բուժելի՞, թե՞ անբուժելի է.
- 4) ամլությունն արդյոք հետևանք չէ՞ ամուսնական պարտավորությունները չկատարելու:

Եթե ամուսիններից մեկը անկար կամ ամուլ է, մյուս կողմն իրավունք ունի լուծելու ամուսնությունը: Բսկ այն դեպքում, երբ կնոջ ամլությունը հոգևոր իշխանության կողմից ամուսնալուծության հիմք չի ընդունվում, մարդիկ կամ լուծում են ամուսնությունն իրենք՝ արձակելով ամուլ կնոջը, կամ օրինավոր կնոջ կողքին պահում են երկրորդին: Երկրորդ կնոջը, իհարկե, պահում են ոչ թե օրինավոր պսակով, այլ ժառանգներ ունենալու համար¹²: Այդ է վկայում նաև Բարսեղին վերագրված «Վասն պէսպէս...» կանոնախումբը, որը երկու նորմ է նվիրել նշված հարաբերությանը: Այն չէր խրախուսում ամլության համար կնոջն արձակելը, սահ

⁹ Նույն տեղում:

¹⁰ Սամուելյան Խ., նշվ. աշխ., էջ 221:

¹¹ Ղլտճյան Ա., նշվ. աշխ., էջ 224:

¹² Նույն տեղում, էջ 227:

մանում էր երկակի ապաշխարություն: Սակայն մյուս կողմից՝ «թե թողցէ այր գկին վասն զաւակի» արտահայտությունից երևում է, որ օրենսդիրն ամուսնության պատճառով կնոջն արձակելը թողել է ամուսնու հայեցողությանը, որը սովորաբար արձակում էր նրան կամ չէր արձակում, երբ ամուլ կինը համաձայնվում էր մնալ տանը և ամուսնուն թույլատրում էր ունենալու ծննդկան կին: Բարսեղի ՄԺԳ կանոնը հավաստում է, որ կանանց չի բավարարել ո՛չ ամուսնալուծությունը և ո՛չ էլ ծննդկան կնոջ հետ իր ամուսնու ամուսնանալը, քանզի հարցի լուծման երկու ուղիներն էլ կնոջ համար խիստ անպատվաբեր էին և անհեռանկար¹³:

Հոգևոր իշխանությունը ճանաչում է ամուսնության պատճառով ամուսնալուծության միայն մի հիմունք. դա անկարությունն է (impotenz): Թեև Շահապիվանի ժողովի տրամաբանությամբ (5-րդ կանոն) ամուսնությունն առհասարակ ամուսնության (չբերության) պատճառով լուծելի պետք է լիներ:

Եթե անկարությունը և ամուսնությունը առհասարակ հիվանդ կողմին հայտնի են եղել նախքան ամուսնության դաշնը կոելը, ապա այդ ժամանակ ամուսնության լուծումը տեղի է ունենում հեշտ: Խնդիրը խիստ դժվարանում է, երբ անկարությունը և ամուսնությունը առաջ են եկել ամուսնական կյանքի ընթացքում: Ըստ Շահապիվանի կանոնի՝ խնդիրը չի փոխվում՝ ամուսնությունը լուծելի է և այս դեպքում: Սակայն եկեղեցու իշխանությունը, ճանաչելով հետո երևան եկած այդ արատ-հիվանդությունը, պսակի ժամանակ երկու կողմի երդման և խոստման վրա հենված՝ մերժում է այդ հիմունքներով ամուսնալուծությունը: Սովորույթի իրավունքը խնդիրը կարգավորում է ըստ հին իրավունքի: Նա թույլ է տալիս հիվանդ կողմին հեռացնել կամ նրա կողքին պահել մի երկրորդ կին, երբ եկեղեցին մերժում է լուծել պսակը: Ըստ սովորույթի իրավունքի, երբ ամուսինն արձակում է իր ամուլ կնոջը, պարտավոր է նրա ապրուստը հոգալ:

Արիական բոլոր ազգերն էլ ամուսնական անհավատարմությունը ճանաչել են իբրև ամուսնալուծության հիմք և ենթարկել պատիժների: Նույնն է նաև հայերի մոտ. այդ իրավաբանականությունն է, որ խոսում է Շահապիվանի օրենսդրի բերանով (3, 4 և 5-րդ կանոններ): Հայ ընտանեկան կազմակերպության հետազոտություններից մենք կարող ենք հանգել հետևյալ եզրակացությունների. ա) ըստ հայկական իրավաբանականության՝ ամուսնական կյանքի մեջ ամուսինների, հատկապես կնոջ հավատարիմ մնալը մի խիստ պատվիրան է. բ) կնության վերցրած աղջիկը պետք է կույս լինի, իսկ եթե կույս չի լինում, ապա ամուսնությունն անվավեր է: Պսակի գիշերը աղջկա կույս չլինելը հավասար է անհավատարմության:

Եթե ամուսնության գլխավոր նպատակը ցեղը շարունակելն է համարվում, յուրաքանչյուր հանգամանք, որը խանգարում է այդ նպատակին հասնել, համարվում է ամուսնալուծության հիմք: Դրանց շարքում են ծանր, անբուժելի հիվանդություն-

¹³ Հովհաննիսյան Ս., նշվ. աշխ., էջ 278:

ները: Անբուժելի հիվանդությունները կարող են երևան գալ ամուսնությունից հետո՝ արգելք լինելով ծննդաբերության և բեղմնավորման, սակայն միննույն ժամանակ ֆիզիկական զգվանք առաջացնել մյուս կողմի մեջ: Ըստ հին իրավունքի՝ արատավորին թույլատրելի է արձակել՝ հիմք ընդունելով արատը: Հայ հին ըմբռնողությամբ անբուժելի ճանաչված այդ հիվանդություններն են բորոտությունը, քոստությունը, կուրությունը, անդամալուծությունը, ինչպես նաև վեներական հիվանդությունները: Վերջինները ոչ միայն այն պատճառով, որ վարակված կողմի դեմ ամուսնական անհավատարմության ապացույցներն են, այլև, որ այդ հիվանդությունները լուրջ վտանգ կարող են պատճառել առողջ ամուսնուն՝¹⁴:

Եթե ամփոփենք «Կանոնագիրք Հայոցի» և «Արենք յաղթող թագավորացի» ամուսնալուծության օրինավոր պատճառները, ապա ըստ այդմ՝ տղամարդը կնոջից ամուսնալուծվելու իրավունք ուներ կնոջ անհավատարմության, բորոտության, դիվահարության, ամլության և այլ պատճառներով: Կինն ամուսնուց բաժանվելու իրավունք ուներ ամուսնու անհավատարմության, կախարդության, անկարության, անասնապղծության, կնոջ նկատմամբ գործադրվող բռնության և գողության համար¹⁵:

Կրոնափոխությունը նույնպես ամուսնալուծման պատճառ չի ընդունել եկեղեցին, սակայն կարելի է բաժանվել, որ քրիստոնյա կինը չմոլորվի: Իսկ երբ հավատուրաց տղամարդը ապաշխարում է, ապա կինն իր ամուսնու փրկության համար պետք չէ, որ նրանից բաժանվի՝ ըստ Պողոս Առաքյալի պատվիրանի, թե «սուրբ է կինն անհավատ արամբն» (Ս. Կորնթյե, 8-14): Նույն կերպ էլ կլինի, եթե կինը կրոնափոխ լինի:

НЕЛЕГИТИМНЫЙ БРАК И РАСТОРЖЕНИЕ БРАКА В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

ЖАМКОЧЯН А. С.

Резюме

Христианская религия запрещает расторжение брака, основываясь на том, что соединенное Богом не может быть разделено человеком (Матф. 19.6). Именно на этой основе была разработана первичная правовая регуляция брака, и на этапе раннего средневековья церковь придерживалась этого со всей строгостью. Тем не менее на практике вопрос оказался не столь простым, поскольку в отдельных случаях требовался особый подход. Наиболее однозначным было решение вопроса в связи со смертью одной из сторон, но на практике часто приходилось доказывать факт смерти. Нелегитимными считались также браки, основанные на близком

¹⁴ Ղլտճյան Ա., նշվ. աշխ., էջ 230:

¹⁵ Հովհաննիսյան Ս., նշվ. աշխ., էջ 285:

родстве (ниже четвертой степени), расторгнуть которые не всегда представлялось возможным. В числе причин, указываемых в качестве основания для объявления брака недействительным, были: неполучение согласия одной из сторон, фактически – факт принуждения, невменяемость одной из сторон, второй брак при жизни законного супруга и супружеская неверность. С течением времени произошла модификация законов о расторжении брака. На определенном этапе исторического развития расторжение брака стало допустимым, но при этом оно регулировалось перечнем случаев, в которых оно считалось легитимным.

INVALID MARRIAGE AND DIVORCE IN MEDIEVAL ARMENIA

A. GHAMKOCHYAN

Abstract

The Holy Bible and, according to it, the Christian doctrine, prohibits divorce, based on the principle of Matth.19.6 declaring that anything connected by God cannot be segregated by people. The primary legislative regulation of marriage was developed based on that principle, and the Church laws of early Middle Ages strictly followed it. Nevertheless in practice the item was complicated with a lot of special cases, demanding separate handling on the one hand, with obvious resistance of the common law with its traditional principles of blood relationship – on the other hand. The most proper was the case of divorce connected with the death of a partner, but in practice the fact of death often had to be documented. Further, marriage between near relatives (under the fourth grade of relationship) were illegitimate, but practical realization of divorce was not every time possible. Under the causes when necessity of divorce considered as proved were disagreement of one of partners to marry, in fact, violence and repression, irresponsibility, or disease of a partner, second marriage while the first spouse is alive, and adultery. During centuries cumulated practice of disputable cases and pressure of the common law resulted in modification of laws regulating divorce, especially in regard of inability of one of the partners to have children, not rarely, when combined with prohibition of divorce, leading to cases of bigamy. Recent analysis allows to conclude that over the time divorce ceased to be prohibited but was regulated by the lists of cases in which it regarded to be legal.